ՊԵՏՔ Է ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐՔ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ «ԽՈՍԵՆ»

Էդգար Խաչատրյան, Վահագն Անտոնյան

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009

ՊԵՏՔ Է ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ «ԽՈՍԵՆ»

Էդգար Խաչատրյան, Վահագն Անտոնյան

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009

Այս տարվա ապրիլ-մայիս ամիսներին «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները մի շարք հանդիպումներ եւ հարցազրույցներ ունեցան Թուրքիայում, Ստամբուլում բնակվող թուրք հասարակության ներկայացուցիչների հետ: Հայ-թուրքական ձեւավորվող հարաբերությունների վերաբերյալ այնտեղ տիրող կարծիքներն ու տրամադրությունները, Ստամբուլ քաղաքի օրինակով՝ հասարակության տարբեր շերտերի (թե՛ մտավորականների, թե՛ հասարակ ժողովրդի շրջանում) ներկայացուցիչների մոտեցումներն այս հարցին պարզելու նպատակով, զրույցներ անցկացվեցին Թուրքիայում բնակվող ինչպես թուրքերի, քրդերի, այնպես էլ տեղաբնակ հայերի շրջանում:

…«Հայաստանը կարծես չկա»…

Եթե հայաստանաբնակ հայերի համար Թուրքիան «յոթ սարի ետեւում չէ» եւ այնտեղ ավանդաբար ապրող հայկական գաղթօջախից բացի նոր, անգամ առավել բազմամարդ, Թուրքիայում զբաղվածություն փնտրող «հայաստանյան» գաղթօջախ է առաջացել, ապա թուրքերի համար Հայաստանը փակ սահմանից այն կողմ ընկած ինչ-որ անծանոթ եւ անհասկանալի, ոմանց համար՝ թշնամաբար տրամադրված մի երկիր է: «Հայաստանը կարծես չկա այդ փակ սահմանի պատճառով», - ասում է Թուրքիայի քաղաքացի, ազատ լրագրող, ազգությամբ քուրդ Ուլաշ Թոսունը: «Որպես լրագրող հեշտությամբ կարողացա գնալ Վրաստան: Սակայն Հայաստան այդպես էլ չկարողացա գնալ: Սա երկու ժողովուրդների հանդեպ անարդարություն է: Կուզեմ սահմանը բացվի: Թե՛ որպես լրագրող, թե՛ որպես զբոսաշրջիկ: Ճիշտ է, հայ եւ թուրք ժողովուրդների պատմության մեջ ցավոտ վերք կա, սակայն ինչպե՞ս կարող ենք խոսել 1,5 մլն զոհերի մասին, երբ սահմանը փակ է»:

Շատ թուրքերի համար օրակարգային եւ անգամ հետաքրքիր չէ Հայաստանի հետ սահմանի բացման կամ հարեւան երկրի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացը, անգամ՝ չնայած այն բանին, որ հեռուստատեսությամբ եւ տպագիր մամուլում հարցը բավականին լայնորեն է լուսաբանվում Թուրքիայում: Հարցման ընթացքում Ստամբուլի փողոցներում անգլերենին տիրապետող անցորդներից շատերը նշեցին, որ ծանոթ չեն հարցման թեմային, չեն հետաքրքրվում, կամ, անգամ չեն էլ լսել այդ մասին:

Իսկ Թուրքիայում բնակվող հայերը ուշի ուշով են հետեւում ընթացող բանակցություններին: «Ակոս» թերթի խմբագրության աշխատակից Բագրատ Էստուկյանը երկակի մոտեցում ունի հարցին: Նա շատ կուզեր հայ-թուրքական սահմանը բաց, Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունները՝ բարելավված տեսնել, սակայն մյուս կողմից իր մտավախություններն ունի. «Որպես անհատ եւ իբրեւ հայ, չէի ուզի, որ Հայաստանը «կեղտոտվեր», քանի որ մտավախություն ունեմ, որ, անտարակույս, սահմանի բացման հետ մեկտեղ կաշխուժանա նաեւ մաքսանենգությունը, գլուխ կբարձրացնի թմրաբիզնեսը…»: Պարտադրանքով երկխոսություն չի լինում

Անդրադառնալով հայ-թուրքական «ջերմացող» հարաբերությունների հարցին, Ու. Թոսունը կարծիք հայտնեց, որ մերօրյա քաղաքական իրավիճակն է Թուրքիային եւ Հայաստանին պարտադրում երկխոսություն: Սակայն, պարտադրանքով առաջացած ցանկացած բան դժվարությունների է հանդիպում. հայ-թուրքական նոր սկսված երկխոսությունը հնարավոր է այդպես էլ առաջընթաց չունենա: «Ընդհանրապես, քաղաքագետների խոսելու բանը չէ սա:

Պետք է երկու ժողովուրդները «խոսեն»: Անհրաժեշտ են ոչ պետական համագործակցություններ: Չէ՞ որ ներկա դժվարությունները հենց քաղաքական գործիչներն են ստեղծել, փակել են սահմանը, որ «արդյո՞ք բանանք» ասելով օրակարգ ստեղծեն ու էլի չկարողանան լուծում գտնել այդ խնդրին»:

Նրա հետ համակարծիք է նաեւ թուրք լրագրող Ալթու Յիլմազը. «Քաղաքականությունն, իհարկե, իր ծանրակշիռ ազդեցությունն ունի, սակայն ես առավել արժեւորում եմ երկու երկրների հասարակ ժողովուրդի միջեւ երկխոսությունը: Մեծ տեղ եմ տալիս մարդկային հարաբերություններին ու ամեն անգամ սփյուռքահայի հանդիպելիս ես, իմանալով հանդերձ, որ ցեղասպանության հարցը մի շատ ծանր բեռ է սփյուռքահայության ուսերին, պարզապես հրավիրում եմ նրանց Թուրքիա: Ուզում եմ գան, տեսնեն, ծանոթանան, շփվեն: Միայն նման կերպ կարելի է փոխել թուրքերի կարծիքը հայերի, հայերինը՝ թուրքերի մասին: Միայն պարզ մարդկային փոխհարաբերություններ ձեւավորելով կարելի է հաղթահարել բոլոր նախապաշարմունքներն ու կարծրատիպերը, բարելավել հարաբերությունները երկու ժողովուրդների միջեւ»:

Անգամ ստամբուլյան «Էրբոյ» հյուրանոցի բեռնակիր 23-ամյա Ալին, որն ամբողջ աշխարհից Թուրքիա ժամանող հազարավոր հյուրեր է դիմավորում իր աշխատանքային պարտականությունները կատարելիս, հատկապես ուրախությամբ է դիմավորում հենց հայ հյուրերին, նշում, որ իր համար անչափ հաճելի է, որ Հայաստանից մարդիկ կարողանում են գալ եւ տեսնել Թուրքիան, եւ մեկ օր էլ ինքը կցանկանար Հայաստան այցելելու հնարավորությունն ունենալ:

Բիր միլիեթ, իքի դովլեթ

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ներկայում ընթացող բանակցությունները հիմնականում ընթանում են գաղտնիության պայմաններում: Այդ գաղտնիության շղարշից բանակցությունների բովանդակության մասին մեզ հասնող պատառիկները երբեմն իրարամերժ են. չնայած հայտարարություններին, որ այդ բանակցություններն ընթանում են առանց նախապայմանների, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մայիսի 13-ին Բաքու կատարած իր այցի ընթացքում հայտարարեց, որ Հայաստանի հետ սահմանը փակվել է «Ադրբեջանի տարածքները, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կողմից օկուպացվելու պատճառով: Եւ սահմանը կբացվի միայն այն բանից հետո, երբ հայերը «վերացնեն» այդ պատճառը»:

Իրարամերժ լուրերի առատության պատճառով է, որ Բագրատ Էստուկյանը բավականին զգուշավոր է այս հարցի շուրջ կարծիք արտահայտելու ժամանակ. «Էրդողանն ասաց, որ նման բաները իսկույն չեն հայտարարվում,

որպեսզի քաղաքագետների աշխատանքը հանգիստ ընթանա: Ճանապարհային քարտեզի մասին տեղեկություններ չունենք, դրանք հրապարակված չեն (չնայած «Ճանապարհային քարտեզ» հասկացությունն ինքնին գաղտնիություն չի պահանջում) այս իսկ պատճառով դժվար է որեւէ կարծիք արտահայտելը»:

Հայաստանի կողմից Ադրբեջանի «օկուպացված» տարածքները վերադարձնելու հարցը որպես հայ-թուրքական սահմանի բացման նախապայման դիտարկելը ճիշտ չի համարում Ալթու Յիլմազը. «Լեռնային Ղարաբաղը Թուրքիայի խնդիրը չէ: Իսկ «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը ես մանկամտություն եմ համարում: Դա այլեւս հին պատմություն է: Ավելին, դրանից նացիոնալիզմի հոտ է փչում: Թուրքական ծագմամբ ազգություններ շատ կան աշխարհում, օրինակ Ասիայում, անգամ Չինաստանում: Ինչո՞ւ ես պետք է ինչ-որ ընդհանրություն զգամ նրանց հետ»:

Ստամբուլահայ Հրանտ Գասպարյանի կարծիքով, Էրդողանի վերոնշյալ հայտարարությունը Բաքվում մեկ անգամ եւս ցույց է տալիս, որ Թուրքիան ուրախ եւ հպարտ է Ադրբեջանի «պոչը» դառնալով. «Թուրքիան հայտարարում է, որ սահմանը չի բացվի, մինչեւ Արցախյան հիմնախնդիրը չկարգավորվի: Ըստ ինձ, սա նշանակում է, որ սահմանը հավիտյանս փակ է մնալու: Թուրքիան իրավունք չունի այս լուրջ խնդիրը որպես նախապայման օգտագործելու: Երկերեսությունը մի կողմ դնելով, Թուրքիան չպետք է մոռանա Կիպրոսի խնդիրը, որը ճանաչված չէ եւ բռնազավթված տարածք է համարվում Եվրամիության եւ աշխարհի շատ երկրների կողմից»:

Ի հակակշիռ այս կարծիքների, շատերն են Թուրքիայում կարեւորում հայ-ադրբեջանական հարաբերությունները. «Բանականությունը մեզ հուշում է, որ սրանք տարբեր խնդիրներ են եւ պետք չէ մեկը մյուսին կապել: Չափազանց կարեւոր է Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը հենց միայն այն պատճառով, որ այսօրվա իրականության մեջ անհնար է բնականոն զարգանալ առանց ամենամոտ հարեւաններիդ հետ լավ հարաբերություններ ունենալու, սակայն հոգու խորքում զգում ենք, որ մենք եւ ադրբեջանցիները մեկ ազգ ենք՝ տարբեր պետություններում»,- ասում է «Օնուր-տուրիզմ» տուրիստական կազմակերպության ղեկավար Յիլմազ Օզլուկը:

«Աղվեսների հանձնաժողով»

Հայաստանի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ կողմ են առանց որեւէ նախապայմանի Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելուն, բայց նաեւ նշում, որ սա չի նշանակում, որ հայերը կմոռանան ցեղասպանությունը: Թուրքիայում, անգամ նացիոնալիստական գաղափարներից իրենց հեռու համարող շրջանակներում,

որոնք դեմ չեն սահմանների բացմանն ու հարաբերությունների լավացմանը, բավական զգուշավոր են մոտենում խնդրին եւ տատանվում են հարցում, արդյո՞ք հարաբերությունների բարելավումը Հայաստանի հետ կբխի Թուրքիայի շահերից: Ամեն անգամ թուրքական հասարակությունը բացասական լիցքեր է ստանում, անգամ՝ զայրույթով լցվում՝ լսելով, որ Հայաստանը եւ աշխարհասփյուռ հայությունը նախանձախնդիր կերպով հետամուտ է լինում 1915թ.-ին կատարվածը ցեղասպանություն որակելուն: Յիլմազ Օզլուկը պատմաբանների քննարկման առարկա է համարում ցեղասպանության հարցը, նշում, որ իր երկրի իշխանությունները բազմիցս են նման առաջարկ արել Հայաստանին, որ պատմաբանների համատեղ հանձնաժողովը քննարկի այն: «Համատեղ ուժերով քննարկենք անցյալը, որ համատեղ առողջ ապագա կառուցենք»,- ասում է նա:

Ծայրահեղ հակադիր կարծիքի է Հրանտ Գասպարյանը. «Իբր երիտասարդ անհատ եւ իրատես հայ, վստահ եմ, որ եթե իրականանա այս բանը՝ այն պիտի լինի «աղվեսների հանձնաժողով», որի հետեւանքները անորոշ կարող են լինել եւ իհարկե միայն Թուրքիո շահերին կծառայի: 1915-ին պատահածը ամբողջ հայության համար անսակարկելի իրողություն է, որը չի կարելի քննության առնել եւ պետականորեն նման հանձնաժողով թույլատրել կամ հանդուրժել»:

Ու. Թոսունը եւս կարեւորեց պատմական փաստերին անդրադառնալու, անցյալն ընդունելու եւ այդ անցյալի հետ հաշտվելու գաղափարը, նշելով, որ առանց դրա առաջընթաց չի կարող լինել եւ իր խոսքն ավարտեց Թուրքիայում ներկայումս գրեթե արգելված այս թեմայի մասին թուրք բանաստեղծ Նազիմ Հիքմեթի դեռեւս 1940-ականներին գրած բանաստեղծության տողերով. «Սա մեր հարեւան հայ նպարավաճառը երբեք պիտի չների իր ժողովուրդը լեռներուն վրա բնաջնջողներու արարքը…»:

Ալթու Յիլմազն էլ անդրադարձավ ցեղասպանության հարցում Թուրքիայի մերժողական կեցվածքին: Ըստ նրա, մերժողականությունը, կատարվածը թաքցնելն ու ժխտելը լավագույն ճանապարհը չէ: Եւ անդրադարձ պետք է կատարեն ոչ թե պատմաբանները, այլ պետական մակարդակով. անհրաժեշտ է պարզապես անդրադառնալ անցյալին, ընդունել այն, որպեսզի կարողանաս լուծել ներկայի խնդիրները:

«Էրմենիստան…արկարդաշ…»

Խոսել Ստամբուլի եւ այնտեղ տիրող տրամադրությունների մասին առանց անդրադառնալու ստամբուլյան բազմաթիվ շուկաներին՝ կնշանակեր անտեսել հասարակության մի լայն շերտի կարծիքը: Չնայած, բնականաբար, քչերն էին այնտեղ տիրապետում օտար լեզուների, սակայն երբեմն ժեստերն ու բացականչությունները պակաս արտահայտիչ չեն: Ամեն անգամ լայն ժպիտի եւ

ջերմ ընդունելության կարելի է արժանանալ, եթե Ստամբուլի բազմաթիվ շուկաներից որեւէ մեկում քեզ տրված «Որտեղի՞ց ես» հարցին պատասխանես «Հայաստանից»: «Օ՜, Էրմենիստան, արկարդաշ» ասում էին նրանք եւ փորձում թուրքական հյուրասիրություն ցուցաբերել, անպայման առաջարկում թեյ կամ սուրճ: Այս մարդկանց համար, թվում է, կարեւորություն չունի, թե ինչ են այդ օրը գրում թուրքական լրատվամիջոցները Հայաստանի մասին կամ ինչ սպառնալիք է տեսնում իրենց կառավարությունը հայերի ցեղասպանության մասին պնդումների ետեւում: Նրանք, թերեւս, մտածում են միայն պարզ մարդկային եւ բարեկամական հարաբերությունների, արդյունքում, թերեւս, իրենց հաջող առեւտրի եւ իրենց ընտանիքների բարեկեցության մասին:

ՊԵՏՔ Է ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ «ԽՈՍԵՆ» ... Մաս 2.

Հայկական տեսակետ

Էդգար Խաչատրյան, Վահագն Անտոնյան

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009

Հայ-թուրքական հարաբերությունները եւ դրա հետ կապված զարգացումները շարունակում են օրակարգային խնդիր մնալ ոչ միայն Հայաստանում եւ Թուրքիայում: Չնայած երկու երկրների մամուլը հեղեղված է հարցին վերաբերող տեղեկատվությամբ, սակայն շեշտը, հիմնականում, դրվում է բանակցություններում ներգրավված երկրների ղեկավարների, արտաքին քաղաքականության պատասխանատուների, փորձագետների հայտարարությունների եւ մեկնաբանությունների վրա, իսկ երկու երկրների հասարակությունները, հայտնվել են պասիվ «դիտորդի» կարգավիճակում:

Հայ-թուրքական հարաբերություններն, ինչպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը, եւս մեկ անգամ դառնում են բացառապես քաղաքական էլիտաների քննարկման առարկա: Հասարակության լայն շերտերը շատ քիչ տեղեկատվություն են ստանում բանակցությունների, արդեն ձեռք բերված պայմանավորվածությունների, արդյունքում՝ քիչ պատկերացում ունեն հետագա հնարավոր զարգացումների ու հեռանկարների մասին: Իսկ ստացված ինֆորմացիայի պատառիկները պատճառ են դառնում բազմաբնույթ ենթադրությունների, հնարավոր է՝ նաեւ թյուր մեկնաբանությունների, ինչն իր արտահայտությունը գտավ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանում քաղաքացիների շրջանում կատարված հարցման ընթացքում հնչած կարծիքների բազմազանության մեջ. «Խաղաղության երկխոսություն» խաղաղասիրական հկ-ն, որի գործունեությունն ուղղված է տարածաշրջանում առկա կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանը նպաստելուն, նմանատիպ հարցում անց էր կացրել նաեւ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում:

Թաքցնում են՝ ուրեմն թաքցնելու բան կա

Հարցման մասնակիցներից շատերն էին տարակուսում բանակցությունների գաղտնիության փաստից: Չնայած այն բանին, որ, ինչպես ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն է հավաստում, այս խնդրի շուրջ ընդունված ցանկացած որոշում կամ համաձայնություն արդյունքում պետք է քննարկվի Ազգային Ժողովում, այս կերպ ապահովելով թափանցիկությունն ու հանրությանը մատչելիությունը, սակայն ներկայում գործընթացը շարունակվում է գաղտնիության պայմաններում: «Ժողովուրդը ծանոթ չի բանակցությունների բովանդակությանը, բնականաբար, պետք է մտածի, որ վատ է իր համար, այլապես ինչի՞ են թաքցնում իրենից: Արդյո՞ք դա նշանակում է, որ թաքցնելու բան կա»,- ասում է լրագրող, բանաստեղծ-թարգմանիչ Խորեն Գասպարյանը: Կրթությամբ պատմաբան, ներկայում գործազուրկ Էդգար Հակոբյանի կարծիքով էլ, այս խաղը թելադրված է գերտերությունների կողմից եւ բանակցության կողմերը պարզապես վախենում են ուրիշի թելադրանքով կատարվածը ժողովրդին ներկայացնելուց: Սակայն այս հարցում բոլորը չեն միակարծիք. «Սա իշխանությունների լուծելու խնդիրն է, որին բարենպաստ լուծում տալն, իհարկե, լավ կլինի երկու ժողովուրդների համար էլ, սակայն այս հարցում մենք անելիք չունենք այլեւս», - այսպիսին է ինֆորմացիոն տեխնոլոգիաների 25-ամյա մասնագետ Էդգար Մարուքյանի տեսակետը, որից էականորեն չի տարբերվում Հայաստանի ուկրաինացիների «Ուկրաինա» միության Լոռու մարզի

մասնաճյուղի ղեկավար Լյուդմիլա Կոժեմյաչենկոյի մոտեցումը. «Դիվանագիտական հարաբերությունների կարգավորումը միանշանակ քաղաքական այրերի գործունեության ոլորտն է, իսկ ժողովուրդը կարող է ընդամենը պարարտ դաշտ ապահովել նրանց գործունեության համար»:

Եթե հարաբերությունների բարելավում՝ ապա միմիայն առանց նախապայմանների

Հարցվածների գերակշիռ մասը, եթե ոչ յուրաքանչյուրը, համակարծիք էին միայն մեկ բանում, այն է, եթե թուրք-հայկական հարաբերություններում նկատվող առաջընթացը պետք է հանգեցնի բարիդրացիական եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն, արդյունքում՝ սահմանի բացմանը, ապա նման գործընթացն ընդունելի է միմիայն առանց նախապայմանների: Խ. Գասպարյանի կարծիքով այս հարցում նախապայմանների առաջ քաշումն անթույլատրելի է եւ, ինչպես նա է ասում, «…ամենավատ բանն է: Ցանկացած կողմի ցանկացած նախապայման միայն մեկ բանի մասին կարող է խոսել, որ պնդում ենք, որ լինի միմիայն այնպես, ինչպես մենք ենք ուզում: Ավելի լավ կլինի սկսել հարաբերությունների հաստատումը եւ սահմանը բացել առանց որեւէ նախապայմանի, իսկ հետագայում՝ այդ հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, առկա խնդիրների մասին խոսելու անհրաժեշտությունն անխուսափելիորեն կծագի: Այդ դեպքում, դրանց լուծումներն էլ հնարավոր կլինի գտնել հնթացս»: Նրա կարծիքով, Թուրքիան իրավունք չունի այս կամ այն հարցը, մասնավորապես՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը, որպես նախապայման Հայաստանի առջեւ դնելու, մանավանդ, երբ հայկական կողմը «մոռանում է» եւ որպես նախապայման չի դիտարկում անգամ ցեղասպանության ցավոտ հարցը:

Է. Հակոբյանը եւ մասնագիտությամբ համակարգերի ադմինիստրատոր Արամայիս Գյուլբեկյանը գտնում են, որ Հայաստանի ներկայիս վիճակն այնպիսին չէ, որ պայմաններ թելադրի: «Իհարկե, - նշում է Ա. Գյուլբեկյանը, - երբեւէ չեմ կարող ընդունել, որ մոտ ապագայում կմոռացվի ցեղասպանությունը կամ Ղարաբաղի հիմնախնդիրը, բայց հարաբերությունների կարգավորումն անհրաժեշտ է սկսել առանց նախապայմանների: Դե, իսկ հարաբերությունների նորմալացումը, հույս ունեմ, առաջին հերթին լավ կարտահայտվի Թուրքիայում այժմ բնակվող հայերի, Հայաստանի քաղաքացիների, նրանց իրավական պաշտպանվածության վրա»:

Նախապայմանների անընդունելիության վերաբերյալ համակարծիք են նաեւ Հայաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ Վանաձորի հունական համայնքի ղեկավար Արկադի Խիտարովը եւ «Ուկրաինա» միության Լոռու մարզի մասնաճյուղի ղեկավար Լյուդմիլա Կոժեմյաչենկոն դեմ

չեն Հայաստան-Թուրքիա համագործակցությանը՝ միայն մեկ վերապահությամբ. առանց որեւէ նախապայմանի: Բացի այդ, նրանց զարմանալի է թվում այն, որ Թուրքիան, որպես Հայաստանի հետ իր հարաբերությունները լավացնելու նախապայման, դիտարկում է բոլորովին այլ երկրի (Ադրբեջանի) հետ եղած կոնֆլիկտի հարթման անհրաժեշտությունը: Վայոմինգի համալսարանի շրջանավարտ Արմեն Բեժանյանն տարակուսում է, թե ինչու հայ - ադրբեջանական եւ հայ - թուրքական հարաբերությունները, տարբեր խնդիրներ հանդիսանալով եւ այլ դրդապատճառներ ունենալով՝ դառնում են «եռակողմ» հարաբերություններ:

Նախապայմանների միջոցով հարաբերությունների բարելավումը խոչընդոտելու միտումը որոշ հարցվածների մոտ տպավորություն է ստեղծում, որ այս ամենի ետեւում քաղաքական խաղեր են թաքնված. միջազգային հանրությանն համոզել ձգտելով, որ հնարավոր ամեն ինչ է անում Հայաստանի հետ հարաբերությունները լավացնելու ուղղությամբ, Թուրքիան միաժամանակ նախապայմաններ դնելով փորձում է սառեցնել այդ գործընթացը. «Սա ընդամենը խաղ է: Ցույց են տալիս, որ փորձում են իրար մոտենալ. կողմերը «հոտոտեցին» միմյանց եւ ետ կանգնեցին: Այս իրադրությունում Հայաստանը հաղթող դուրս եկավ, քանի որ չշեղվեց իր դիրքորոշումից, ի տարբերություն Թուրքիայի», - համոզված է Է. Հակոբյանը: Ա. Բեժանյանը եւս հավատացած է, որ դա ընդամենը խաղ է Թուրքիայի կողմից եւ լուրջ տրամադրվածություն չի տեսնում. «Ըստ իս, Թուրքիան ցանկացած հնարավորություն օգտագործելու է, որպեսզի չշարունակի բանակցությունները: Դրա պատճառ կարող է դառնալ անգամ, օրինակ, Ղարսում կամ որեւէ այլ տեղ թուրք ազգաբնակչության բողոքի ցույցը կամ նման մեկ այլ բան»:

Լոռու մարզպետի խորհրդական Էդիկ Հովսեփյանը մեջբերում է, որ տարածաշրջանը խաղաղության եւ կայունության տարածաշրջան դարձնելու ծրագիրը Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուինն է: Սակայն ինչպե՞ս կարող է Թուրքիան հասնել դրան՝ տարածաշրջանի երկրներից մեկի հետ ոչ մի հարաբերություններ չունենալով: «Նման եւ այլ նկատառումներն են ինձ հիմք տալիս մտածելու, որ այս ամենը պարզապես քաղաքական խաղեր են»,- ասում է նա, - «Բացի այդ, ներկա վիճակը վնաս է նաեւ Ադրբեջանին. Թուրքիան, նրա գլխավոր ստրատեգիական գործընկերը, ոչ մի ազդեցություն չունի Հայաստանի վրա, արդյունքում՝ քիչ դերակատարություն տարածաշրջանում»:

Սահմանի բացում. սպասումներ եւ մտավախություններ

Չնայած այն բանին, որ հիմնականում դրական էր հարցվածների մոտեցումը հայ-թուրքական սահմանի բացման վերաբերյալ, սակայն նման հեռանկարը, բացի սպասումներից եւ ակնկալիքներից, նաեւ բազում

մտահոգությունների տեղիք է տալիս նրանց: Նշելով հանդերձ, որ սահմանի բացումը շրջափակումից դուրս գալու հնարավոր միակ ելքն են տեսնում, որ դա մեծ խթան կլինի երկրի տնտեսության, լավ նախադրյալ՝ ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացման համար եւ այլն, այնուամենայնիվ, հարցազրույցի մասնակիցները ակամայից զգուշավոր էին արտահայտվում անհայտ հեռանկարի նկատմամբ: Արամայիս Գյուլբեկյանը միանշանակ կողմ է սահմանի բացմանը. «Սա նոր այլընտրանքային ճանապարհ է Հայաստանի համար: Գոյություն ունեցողներից միայն Իրանի հետ ճանապարհն է կայուն, իսկ մյուսը (Վրաստանի հետ) հենց Ռուսաստանը Վրաստանի հետ մի բան չկիսի՝ մենք ենք տուժելու»:

«Շատ լավ կլինի, եթե սահմանը բացվի, ինչն ինձ թույլ կտա, գոնե հայրենիքս գնալիս մեկ սահման պակաս հատել (Վրաստանի – ծանոթությունը՝ հեղինակների), բայց մտավախություն ունեմ, որ սահմանի բացումից հետո թուրքական հզոր տնտեսությունը կուլ կտա հայկական փոքրիկ, թույլ զարգացած տնտեսությանը»,- ասում է հունական համայնքի ղեկավար Ա. Խիտարովը եւ անմիջապես էլ մատնանշում է հնարավոր կանխարգելիչ միջոցառումներ ձեռք առնելու անհրաժեշտությունը:

Ըստ Է. Հովսեփյանի, առանց սահմանը բացելու էլ մարդիկ ազատ գնում-գալիս են Թուրքիա. «Բայց երկու երկրների միջեւ սահմանը փակ է: Դրա բացումն առաջիկա 3 տարիների ընթացքում Հայաստանում այնքան էլ չի զգացվի տնտեսական առումով: Պարզապես մարդկանց շարժը կաշխուժանա եւ մի փոքր էլ կնվազեն տրանսպորտային ծախսերը: Ամենակարեւորը՝ կաշխուժանա Թուրքիայի հայկական համայնքի կյանքը, կապը հայրենիքի հետ: Տնտեսական աճ դրա հետեւանքով Հայաստանը կզգա միայն 3 տարի հետո՝ այն էլ կախված միմիայն մեր վարած քաղաքականությունից: Ինչ վերաբերվում է սահմանը բացելու մասին իմ կարծիքին, ասեմ, որ մենք հիմա դեռ պատրաստ չենք դրան: Առնվազն 1-2 տարի է անհրաժեշտ, որպեսզի նոր հեռանկարների հետ համապատասխանեցնենք մեր տնտեսական քաղաքականությունը, օրենսդրական դաշտը, ապա միայն բացենք սահմանը»:

Նշվեց նաեւ, որ մինչ օրենսդրական դաշտի հարմարեցումը, սահմանի բացումը վտանգի տակ կդնի հենց Հայաստանի գոյությունը: «Մտավախություն կա, իմը չի, բայց փոխանցվել է շատերից, որ սահմանի բացումից հետո տնտեսական վատ վիճակը մասսայական արտագաղթի պատճառ կդառնա, կամ թուրքերի քանակը Հայաստանում սպառնալից կաճի»,- ասում է Խ. Գասպարյանը: Այս եւ նման այլ նկատառումներից ելնելով, սահմանի բացման հետ կապված օրենսդրական դաշտի փոփոխությունների գաղափարը շատերի կողմից օրակարգային հարց դիտարկվեց:

Պատմաբանների հանձնաժողով. «Ցեղասպանությունը ծանր բեռ է հայերի ուսերին»

Թուրքիայի կողմից առաջարկվող պատմաբանների համատեղ հանձնաժողովի ստեղծմանը վերաբերող հարցին, չնայած ձեւաչափի անորոշ լինելուն, հիմնականում հանդիպող ժխտական դիրքորոշումների կողքին, կային նաեւ դրան նշանակություն չտվող կամ դրական մոտեցումներ հարցվողների շրջանում: Կրթությամբ պատմաբան Է. Հակոբյանի խոսքերով, հանձնաժողովի ստեղծման կարիք չկա. «Եթե Թուրքիան ցանկանում է պատմական ճշմարտությունը պարզել, թող ինքնուրույն հանձնաժողով ստեղծի եւ զբաղվի այդ գործով՝ ուսումնասիրելով, առաջին հերթին, սեփական արխիվները»: Իսկ եթե նրանք դա անելուց հետո դեռ կունենան հայ պատմաբանների օգնության կարիքը՝ թող դիմեն, ավելացնում է Է. Մարուքյանը. «Ինձ թվում է, հայ պատմաբանները չեն հրաժարվել եւ չեն հրաժարվի տրամադրել իրենց տրամադրության տակ եղած հարցին վերաբերող նյութերը»:

«Հանձնաժողովը չգիտեմ, բայց պետք է ընդհանրապես հնարավորություն տալ երկու երկրների պատմաբաններին, որ նրանք հնարավորություն ունենան ազատ աշխատելու, փոխհամագործակցելու, արխիվներից օգտվելու: Ինչի մասին է խոսքը, եթե Թուրքիայի կադաստրի արխիվը մինչեւ հիմա փակ է. հնարավոր չէ անգամ պարզել, թե մինչեւ 1923թ. ինչն ում է պատկանել: Ահա, թե ինչի աբսուրդ եմ համարում նման հանձնաժողովի ստեղծումը»,- ասում է Է. Հովսեփյանը:

Արմեն Բեժանյանն այլ կարծիքի է. «Հայաստանը պետք է չհրաժարվի հանձնաժողովի ստեղծման գաղափարից, որպեսզի խաղը տանուլ չտա: Դրա մեջ ոչ մի վատ բան չեմ գտնում, ավելին, դա լավ հնարավորություն է հայերի համար թուրքերին եւ աշխարհին ներկայացնել ցեղասպանության իրողությունը եւ միեւնույն ժամանակ պետք է հետամուտ լինել, որ Թուրքիան բացի իր արխիվները»:

Ընդհանրապես, ցեղասպանության թեման գերիշխող էր հարցազրույցների ընացքում, քանի որ, ինչպես հարցվածներից մի քանիսը նշեցին, այդ հարցը ծանր բեռ է հայերի ուսերին, իսկ Ա. Խիտարովի խոսքերով՝ ոչ միայն հայերի. «Նշեմ, որ հույների, ասորիների եւ այլ ազգերի նկատմամբ եւս ցեղասպանություն է կատարվել: Մեր համայնքի առաքելություններից մեկն էլ այն է, որ հույների ցեղասպանությունը, որն առայժմ ճանաչվել է միայն Հունաստանի եւ Կիպրոսի կողմից, ճանաչվի աշխարհի հասարակության կողմից»,- ասում է նա եւ ցավով ավելացնում, որ անգամ Հայաստանը դեռ չի ճանաչել այն:

«Ո՞ւմ է պետք այդ հանձնաժողովը, չգիտեմ: Ի՞նչ են անելու, ինչո՞վ են զբաղվելու: Փաստերն են շուռ տալո՞ւ: Եթե հնարավոր է, որ այն լինի առանց ետին մտքերի, մոտեցումն էլ՝ ի սկզբանե ազնիվ է լինելու՝ թող լինի: Չնայած անկախ պատմական թնջուկներից բարիդրացիական հարաբերություններ ունենալն,

անկասկած, պետք է երկու ժողովուրդներին, բայց այլ բան է, որ անցյալի ցավը, այսպես կոչված «զոհի սինդրոմը», հատկապես հայերի համար, ծանր ժառանգություն է եւ մի ստվար զանգվածի մոտ հոգեբանորեն, ենթագիտակցաբար այդ ախտանիշը դեռ խորը արմատներ ունի: Անգամ «թուրք» բառը ինքնաբերաբար կապվում է դահճի, մարդասպանի կերպարի հետ: Որպես Ղարսից, Մուշից բռնագաղթած Մեծ Եղեռնի զոհերի ժառանգ, կորցրած լինելով պատմական հայրենիքս, շատ կուզեի, որ հարցը լուծվեր հօգուտ երկու ժողովուրդների, իսկ ցավի (որն ամեն անգամ արթնանում է ու ավելի խորանում, հատկապես, Հրանտ Դինքի սպանության նման դեպքերից հետո) բուժման համար՝ թուրք ժողովուրդը պարզապես պետք է ուժ գտնի պատմական փաստերը ճանաչելու»,- ասում է Խորեն Գասպարյանը:

«Հնարավոր չէ լինել մշտական թշնամի»

«Սահմանի բացումը, հարաբերությունների բարելավումն առանց տարակուսելու շրջադարձային կարող է լինել: Եթե անգամ միայն մարդկային հարաբերությունների տեսանկյունից նայենք՝ դա մեծ դեր կարող է խաղալ մեր կյանքում. փոխադարձ այցելությունների, տնտեսական, անձնական շփումների արդյունքում կարող է անգամ այդ դահճի կարծրատիպը հարթվել, չեմ բացառում»,- շարունակում է Խ. Գասպարյանը:

Ըստ Է. Հովսեփյանի, թուրքական հասարակությունն ինքը դեռեւս պատրաստ չէ երկու ժողովուրդների համար էլ ցավոտ հարցերի քննարկմանը. «Այո, թուրքական հասարակությունը դեռեւս պատրաստ չէ քննարկելու: Եւ ոչ միայն մեր հարցը, այլ նաեւ քրդերի, քուրդ ալեվիների, հույների, ասորիների, լազերի… Երբ պատրաստ կլինի՝ մենք էլ հանգիստ կքննարկենք: Բայց ոչ մի հարց էլ չի քննարկվի, քանի դեռ գոյություն ունի թուրքական օրենսդրության 301-րդ հոդվածը, որն ամեն ինչի ճանապարհը փակում է: Ինչեւէ, հնարավոր չէ լինել մշտական թշնամի, այնպես, ինչպես հնարավոր չէ լինել մշտական բարեկամ, քանի որ երկրների միջեւ հարաբերությունները պայմանավորող շահերն անընդհատ փոփոխվում են»:

Իսկ համակարգերի ադմինիստրատոր Արամայիս Գյուլբեկյանը թուրքերի հետ շփման անձնական փորձ ունի: Ճիշտ է, առայժմ միայն ինտերնետային շփման. «Միակ շփումը ինտերնետով է: Մի թուրք իրոք հետաքրքրվում էր ցեղասպանությանը վերաբերող պատմական փաստերով: Նրա հետ 4-5 ամիս խոսեցինք: Ինձ հանդիպած «վիրտուալ» թուրքերից միակ քիչ թե շատ «մեղսունակը» նա էր, մյուսները, թե՛ թուրքերը, թե՛ ադրբեջանցիները, զբաղված էին միայն ֆորումներում հայհոյելով»,- ասում է նա:

Ա. Գյուլբեկյանը կցանկանար լինել Թուրքիայում, տեսնել Ստամբուլը,

կենդանի շփվել երկրի բնակիչների հետ. «Հետաքրքիր կլիներ, միանշանակ կգնայի, ինչո՞ւ ոչ: Գիտեմ, լսել եմ, որ երբ այնտեղ իմանան, որ հայ ես՝ կացիններով չեն հարձակվի: Թող թուրքերն էլ գան, տեսնեն, շփվեն ժողովրդի հետ, պարզապես առանց հետին մտքի: Այստեղ եղածը կգնա, կպատմի իր ընկերներին, նմանապես ես կասեմ իմ ընկերներին, որ, գիտե՞ս, թուրքերն էնքան էլ վատը չեն…Վախենամ, որպես թշնամի Թուրքիան երբեւէ չընդունի ցեղասպանությունը, իսկ բարեկամ երկիր լինելու պարագայում՝ գուցե, ո՞վ գիտի»,- իր խոսքը լավատեսորեն է եզրափակում նա:

«Ժողովուրդները միշտ էլ ցանկացել եւ ցանկանում են ճանաչել, շփվել եւ լավ հարաբերություններ ունենալ միմյանց հետ: Բայց ո՞վ է ժողովրդի կարծիքը հարցնում»,- բողոքում է Է. Հակոբյանը:

Իր մի հետաքրքրական դիտարկման մասին է կիսվում հունական համայնքի ղեկավարը. «Մի հայ ընկեր ունեի, որը Թուրքիայի, թուրքի անուն լսել անգամ չէր ցանկանում այնքան, որ ամեն անգամ իր կամ մեկ ուրիշի կողմից այդ բառերը արտաբերելիս ինքնաբերաբար խաչակնքում էր: Հիմա նա այնտեղ է եւ կտրականապես փոխել է իր վերաբերմունքը նրանց նկատմամբ»,- ասում է Ա. Խիտարովը:

«Նայե՛ք այստեղ», - ծառից պոկված շագանակենու տերեւը ցույց տալով եզրահանգում է Լ. Կոժեմյաչենկոն. «Նրա վրա ոչ մի ուղիղ գիծ կամ ուրվագիծ չկա, սակայն բազում տարիների ընթացքում բնության կողմից կերտված այս «ստեղծագործությունն» ինքնին մի կատարյալ եւ ամբողջական օրգանիզմ է: Նույնն էլ հարաբերություններում. ուղղագիծ ճանապարհով ոչնչի չես հասնի: Մարդիկ քայլ առ քայլ պետք է մոտենան իրար, մի անգամ դա կարող է լինել սպորտի, մյուս անգամ՝ մշակութային ինչ-որ միջոցառման շրջանակներում եւ այսպես շարունակ, մինչեւ այս տերեւի նման հայ-թուրքական հարաբերություններն էլ «վերջնական տեսք» ձեռք կբերեն …»

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ, 2009